ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2016

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 4

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Ցանկանում ենք հաջողություն:

Ա մակարդակ

1 Ե՞րբ է գահ բարձրացել փարավոն Թութմոս III-ը.

1) Ք. ա. 1568 թ.
2) Ք. ա. 1540 թ.
3) Ք. ա. 1468 թ.
4) Ք. ա. 1450 թ.

2 Ե՞րբ է կառավարել կայսր Դիոկղետիանոսը.

1) 284-325 թթ.
2) 280-305 թթ.
3) 284-315 թթ.
4) 284-305 թթ.

3 Ե՞րբ են հոները ջախջախել գոթերին.

1) 375 թ.
2) 330 թ.
3) 378 թ.
4) 395 թ.

4 Ե՞րբ է ձևավորվել Գերմանական (Տևտոնական) թագավորությունը.

1) 929 թ.
2) 919 թ.
3) 943 թ.
4) 933 թ.

5 Ե՞րբ է Մոսկվայում հրավիրվել առաջին երկրային ժողովը.

1) 1559 թ.
2) 1550 թ.
3) 1549 թ.
4) 1561 թ.

6 Ե՞րբ է ԱՄՆ-ը հռչակվել համադաշնություն.

1) 1791 թ.
2) 1776 թ.
3) 1802 թ.
4) 1781 թ.

7 **Ե՞րբ է Գերմանիայի ռայխսկանցլեր դարձել Ադոլֆ Հիտլերը.**

1) 1932 թ. օգոստոսի 1-ին
2) 1933 թ. հունվարի 30-ին
3) 1934 թ. օգոստոսի 1-ին
4) 1930 թ. հունվարի 30-ին

8 **Ո՞րն էր Բաբելոնիայի նոր մայրաքաղաքը կասիտների տիրապետության շրջանում.**

1) Լագաշը
2) Ուրուկը
3) Քիշը
4) Դուր-Կուրիգալզուն

9 **Ե՞րբ է Մուհամմեդը Մեքքայից փախել Յաթրիբ.**

1) 630 թ.
2) 632 թ.
3) 622 թ.
4) 624 թ.

10 **Որտե՞ղ է 778թ. ջախջախվել ֆրանկների վերջապահ գունդը Ռոլանդի գլխավորությամբ.**

1) Սարագոսայի մատույցներում
2) Ռոնսևալի կիրճում
3) Կատալաունյան դաշտում
4) Պուատիեի մոտ

11 **Եվրոպական ո՞ր պետություններն են առաջինը ստեղծել գաղութային կայսրություններ.**

1) Ավստրիան, Իտալիան
2) Անգլիան, Ֆրանսիան
3) Հոլանդիան, Գերմանիան
4) Պորտուգալիան, Իսպանիան

12 **Ո՞վ էր բաբիականության ուսմունքի հիմնադիրը.**

1) Աբաս-Միրզան
2) Աղա Մոհամմադը
3) Ալի Մուհամմեդը
4) Մուհամեդ Ալին

13 **Որտե՞ղ է տեղի ունեցել Գերմանական կայսրության հռչակումը.**

1) Վերսալում
2) Վիեննայում
3) Փարիզում
4) Բեռլինում

14 **Ինչպե՞ս կոչվեց Օսմանյան կայսրությունից Իտալիայի նվաճած գաղութը Աֆրիկայում.**

1) Տրիպոլիտանիա
2) Լիբերիա
3) Կիրենաիկա
4) Լիբիա

15 **Ի՞նչ է «ինվեստիտուրան».**

1) Վասալի պարտադիր ծառայությունը սենյորի համար
2) Սենյորի կողմից ավատի հանձնումը վասալին
3) Կայսեր թագադրման արարողությունը
4) Հավատաքննության դատարան

16 **Ի՞նչ է համաշխարհայնացումը (գլոբալացում):**

1) Աշխարհի ամբողջական համակարգված միասնականացման գործընթաց:
2) Արվեստի ավանգարդիստական ուղղություն:
3) Նոր համաշխարհային պատերազմի առաջացման վտանգ:
4) Արդյունաբերության գերակշռող դերի հաստատման գործընթաց:

17 **Եգիպտական փարավոններին դասավորել ըստ գործունեության հաջորդականության.**

ա. Թութմոս III
բ. Ամենհոտեպ IV
գ. Ռամզես II
դ. Յահմոս I

1) բ, գ, դ, ա
2) ա, գ, դ, բ
3) դ, ա, բ, գ
4) գ, ա, բ, դ

18 **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Հռոմի պապի աշխարհիկ պետության առաջացումը
բ. Յարմուկ գետի ճակատամարտն արաբների և բյուզանդացիների միջև
գ. Քաղկեդոնի չորրորդ տիեզերական ժողովը
դ. Օտտոն I-ի հաղթանակը հունգարացիների նկատմամբ

1) դ, բ, ա, գ
2) ա, գ, դ, բ
3) բ, ա, դ, գ
4) գ, բ, ա, դ

19 **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. «Փառահեղ հեղափոխությունը» Անգլիայում:
բ. Անձի անձեռնմխելիության մասին օրենքի ընդունումը:
գ. Անկախականների կողմից հանրապետության հռչակումը Անգլիայում:
դ. Անգլիական խորհրդարանի կողմից Ջեյմս II թագավորին: «սահմանադրության խախտման մեջ մեղադրելը»:

1) գ, բ, դ, ա
2) բ, ա, դ, գ
3) բ, դ, գ, ա
4) դ, գ, ա, բ

20 **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Սուդեթների մարզի բռնակցումը ֆաշիստական Գերմանիային
բ. Փահլավիների արքայատոհմի հաստատումն Իրանում
գ. «Հակակոմինտերնյան պակտը»
դ. Վաշինգտոնի խորհրդաժողովը

1) բ, ա, դ, գ
2) ա, գ, դ, բ
3) գ, դ, բ, ա
4) դ, բ, գ, ա

21 **Ե՞րբ է է կոնսուլ ընտրվել Հուլիոս Կեսարը.**

1) Ք.ա. 49 թ.
2) Ք.ա. 59 թ.
3) Ք.ա. 44 թ.
4) Ք.ա. 54 թ

22 Ե՞րբ է տեղի ունեցել քրիստոնեական եկեղեցու պառակտումը.

1) 1052 թ.
2) 1055 թ.
3) 1064 թ.
4) 1054 թ.

23 Ե՞րբ է Տրապիզոնի կայսրությունը նվաճվել թուրք-օսմանների կողմից.

1) 1461 թ.
2) 1453 թ.
3) 1472 թ.
4) 1389 թ.

24 Ե՞րբ է սկսվել Բալկանյան երկրորդ պատերազմը.

1) 1908 թ.
2) 1913 թ.
3) 1912 թ.
4) 1911 թ.

25 Ե՞րբ է սկսվել քաղաքացիական պատերազմն Իսպանիայում.

1) 1933 թ.
2) 1937 թ.
3) 1940 թ.
4) 1936 թ.

26 Ի՞նչ նոր անունը որդեգրեց Ամենհոտեպ IV փարավոնը.

1) Թութմոս
2) Էխնաթոն
3) Ախետաթոն
4) Պեր-Ռամզես

27 Որտե՞ղ է Հռոմի պապից թողություն ստացել կայսր Հենրիխ IV-ը.

1) Վորմսում
2) Հռոմում
3) Միլանում
4) Կանոսայում

28 Ո՞ր թագավորն է 1302 թ. առաջին անգամ հրավիրել Գլխավոր շտատները.

1) Հենրիխ Բուրբոնը
2) Ֆիլիպ II Օգոստոսը
3) Ֆիլիպ IV Գեղեցիկը
4) Սիմոն դը Մոնֆորը

29 **Ու՞մ է պատկանում այն գաղափարը, թե գիտելիքը կարելի է ձեռք բերել փորձի միջոցով.**

1) Գալիլեյին
2) Կոպեռնիկոսին
3) Բեկոնին
4) Վեզալիուսին

30 **Որտե՞ղ է ստորագրվել Հյուսիսատլանտյան դաշինքի (ՆԱՏՕ) ստեղծման պայմանագիրը.**

1) Ֆուլտոնում
2) Նյու Յորքում
3) Բրյուսելում
4) Վաշինգտոնում

31 **Ո՞րն է 843թ. Վերդենի դաշնագրի գլխավոր հետևանքը.**

1) Ձևավորվեց Ֆրանկական տերությունը:
2) Ձևավորվեց Գերմանական(Տևտոնական) թագավորությունը:
3) Ֆրանկական տերությունը բաժանվեց երեք մասի:
4) Արաբները վերջնականապես վտարվեցին Հարավային Գալլիայից:

32 **Ի՞նչ հետևանք ունեցավ ռեֆորմացիոն շարժումը Ֆրանսիայում.**

1) Ֆրանսիան կորցրեց իր անկախությունը և մասնատվեց Անգլիայի ու Իսպանիայի միջև:
2) Ռեֆորմացիոն շարժումը վերաճեց երկարատև քաղաքացիական կռիվների:
3) Ֆրանսիայի պետական կրոն հռչակվեց կալվինականությունը:
4) Ֆրանսիայում ձևավորվեց ինքնուրույն պետական եկեղեցի:

33 **Պատմական գործիչներին դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Յահմոս I
բ. Շամշի-Ադդու
գ. Ռամզես II
դ. Համմուրապի
ե. Թութմոս I

1) բ, դ, ա, ե, գ
2) ե, գ, բ, ա, դ
3) դ, բ, գ, ե, ա
4) բ, ա, դ, ե, գ

34 **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Նիկեայի նվաճումը թուրք-օսմանների կողմից
բ. Եդեսիայի գրավումը Մոսուլի կառավարիչ Զանգիի կողմից
գ. Բաղդադի գրավումը թյուրք-սելջուկների կողմից
դ. Կոստանդնուպոլսի ազատագրումը խաչակիրներից

1) գ, դ, բ, ա
2) բ, գ, ա, դ
3) գ, բ, դ, ա
4) ա, դ, բ, գ

35 **Ո՞վ է հետևյալ արտահայտության հեղինակը. «Նպատակն արդարացնում է միջոցները»:**

1) Նիկոլո Մաքիավելին
2) Էրազմ Ռոտերդամցին
3) Թոմաս Մորը
4) Ուիլյամ Շեքսպիրը

36 **Ո՞վ է հետևյալ խոսքերի հեղինակը. «Պետական գործիչը տարբերվում է քաղաքական գործչից նրանով, որ քաղաքական գործիչը կողմնորոշվում է դեպի հաջորդ ընտրությունները, իսկ պետական գործիչը՝ դեպի հաջորդ սերունդը»:**

1) Վ. Վիլսոնը
2) Ու. Չերչիլը
3) Վ. Պուտինը
4) Շ. Դը Գոլը

37 **Կատարել համապատասխանեցում.**

1. Օսիրիս
2. Ահրիման
3. Հոր
4. Դի
5. Մարդուկ

ա. անձրևի, կայծակի և քամու աստված
բ. մեռնող և հարություն առնող աստված
գ. բարի և ստեղծարար ոգի-աստծո հակառակորդ
դ. երկինքը մարմնավորող աստված
ե. աշխարհաստեղծ աստված
զ. ռազմի աստված

1) 1-գ, 2-զ, 3-ա, 4-դ, 5-բ
2) 1-դ, 2-ե, 3-գ, 4-զ, 5-բ
3) 1-բ, 2-գ, 3-դ, 4-ա, 5-ե
4) 1-ե, 2-գ, 3-բ, 4-ա, 5-զ

38 **Իրավական փաստաթղթերը համապատասխանեցնել դրանց ընդունման տարեթվերի հետ.**

1. «Անձի անձեռնմխելիության մասին օրենք»	ա. 1653 թ.
2. «Կառավարման միջոց»	բ. 1776 թ.
3. «Մարդու և քաղաքացու իրավունքների հռչակագիր»	գ. 1679 թ.
4. «Իրավունքների օրենք»	դ. 1789 թ.
5. «Անկախության հռչակագիր»	ե. 1689 թ.
	զ. 1649 թ.

1) 1-ե, 2-զ, 3-ա, 4-բ, 5-զ
2) 1-գ, 2-ա, 3-դ, 4-ե, 5-բ
3) 1-դ, 2-ե, 3-բ, 4-զ, 5-գ
4) 1-բ, 2-զ, 3-գ, 4-դ, 5-ե

39 **Ինչպե՞ս էր կոչվում հիքսոսների հիմնած մայրաքաղաքը Եգիպտոսում.**

1) Թեբե
2) Մեմֆիս
3) Հերակլեոպոլիս
4) Ավարիս

40 **Ո՞վ է «Երեքգրոշանոց օպերայի» բեմադրման հեղինակը.**

1) Է. Կիրխները
2) Բ. Բրեխտը
3) Ժ. Բրակը
4) Խ. Միրոն

41 **Ո՞րն է 1799 թ. Ֆրանսիայում տեղի ունեցած պետական հեղաշրջման գլխավոր հետևանքը.**

1) Գործադիր իշխանությունը կենտրանացավ Դիրեկտորիայի ձեռքում:
2) Ֆրանսիական գահին վերահաստատվեցին Բուրբոնները՝ վերականգնելով միապետությունը:
3) Ամրապնդվեց Նապոլեոն Բոնապարտի անձնական իշխանությունը:
4) Ֆրանսիան հռչակվեց հանրապետություն:

42 **Ո՞րն է «Մյունխենյան գործարքի» գլխավոր հետևանքը.**

1) Եվրոպական պետություններին հաջողվեց ֆաշիստական Գերմանիայի ագրեսիան ուղղել ԽՍՀՄ-ի դեմ:
2) Ֆրանսիային միացվեցին Էլզասն ու Լոթարինգիան:
3) Սուդեթի մարզը Չեխոսլովակիայի առանձին շրջանների հետ անցավ Գերմանիային, Լեհաստանին և Հունգարիային:
4) Մեծ Բրիտանիան և Ֆրանսիան ռազմական դաշինք կնքեցին ընդդեմ ֆաշիստական Գերմանիայի:

43 **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Կլիսթենեսի բարեփոխումները
բ. Անտիգոնոսի պարտությունը դիադոխների միացյալ բանակից
գ. Ալեքսանդր Մակեդոնացու ներխուժումը Եգիպտոս
դ. Դարեհ I-ի անհաջող արշավանքը Հունաստան

1) ա, գ, բ, դ
2) բ, ա, գ, դ
3) ա, դ, բ, գ
4) դ, ա, գ, բ

44 **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Լոնդոնում առաջին պառլամենտի հրավիրումը
բ. Կուլիկովոյի ճակատամարտը
գ. Տրապիզոնի կայսրության նվաճումը թուրքերի կողմից
դ. Անտիոքի գրավումը խաչակիրների կողմից
ե. Բաթուի կողմից Ռուսիայի նվաճման ավարտը

1) դ, ա, գ, ե, բ
2) դ, ե, ա, բ, գ
3) բ, ե, դ, ա, գ
4) ե, դ, բ, գ, ա

45 **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Բոսնիայի և Հերցեգովինայի բռնակցումը Ավստրո-Հունգարիայի կողմից
բ. Անգլո-բուրական պատերազմը
գ. Բեռլինի վեհաժողովը
դ. Տրիպոլիտանիայի և Կիրենաիկայի զավթումն Իտալիայի կողմից

1) գ, բ, ա, դ
2) ա, գ, դ, բ
3) բ, դ, ա, գ
4) գ, բ, դ, ա

46 **Կատարել համապատասխանեցում.**

1. Լիսիմաքոս	ա. Եգիպտոս
2. Անտիպատրոս	բ. Փոքր Ասիա
3. Պտղոմեոս	գ. Բաբելոնիա
4. Էվմենես	դ. Մակեդոնիա
	ե. Թրակիա

1) 1-գ, 2-դ, 3-ե, 4-ա
2) 1-բ, 2-ա, 3-ե, 4-դ
3) 1-դ, 2-ե, 3-գ, 4-բ
4) 1-ե, 2-դ, 3-ա, 4-բ

47 **Ստեղծագործությունը համապատասխանեցնել հեղինակի հետ.**

1. «Արևի քաղաքը»	ա. Թովմա Աքվինացի
2. «Աստվածային կատակերգություն»	բ. Թոմաս Մոր
3. «Աստվածաբանության հանրագումար»	գ. Կամպանելա
4. «Ուտոպիա»	դ. Ջորդանո Բրունո
	ե. Դանթե Ալիգիերի

1) 1-դ, 2-գ, 3-ե, 4-ա
2) 1-բ, 2-դ, 3-գ, 4-ե
3) 1-ե, 2-ա, 3-բ, 4-դ
4) 1-գ, 2-ե, 3-ա, 4-բ

48 **Կատարել համապատասխանեցում.**

1. Ռ. Օուեն
2. Ջ. Լիլբեռն
3. Է. Բյորկ
4. Օ. Կրոմվել

ա. հավասարական
բ. անկախական
գ. սոցիալիստ
դ. պահպանողական
ե. կոմունիստ

1) 1-գ, 2-ա, 3-դ, 4-բ
2) 1-ե, 2-բ, 3-գ, 4-ա
3) 1-դ, 2-ե, 3-ա, 4-գ
4) 1-ա, 2-գ, 3-դ, 4-ե

49 **Կատարել համապատասխանեցում.**

1. Իտալիայի միանալը «Հակակոմինտերնյան պակտին»
2. Ադիս Աբեբայի գրավումն իտալական բանակի կողմից
3. Միավորված ազգերի հռչակագրի ստորագրումը
4. Ֆրանսիայի անձնատվության պայմանագիրը
5. Ճապոնիայի ագրեսիան Մոնղոլիայի դեմ

ա. 1935 թ.
բ. 1942 թ.
գ. 1941 թ.
դ. 1939 թ.
ե. 1940 թ.
զ. 1937 թ.

1) 1-դ, 2-բ, 3-ա, 4-զ, 5-գ
2) 1-գ, 2-բ, 3-զ, 4-դ, 5-ե
3) 1-զ, 2-ա, 3-բ, 4-ե, 5-դ
4) 1-ե, 2-գ, 3-դ, 4-ա, 5-բ

50 **Քաղաքական գործիչների անունները համապատասխանեցնել նրանց կառավարման տարեթվերի հետ.**

1. Ռ. Նիքսոն
2. Ժ. Շիրակ
3. Բ. Ելցին
4. Ֆ. Ռուզվելտ
5. Վ. Պուտին

ա. 1990-1998 թթ.
բ. 1933-1945 թթ.
գ. 2000-2008 թթ.
դ. 1991-1999 թթ.
ե. 1995-2007 թթ.
զ. 1969-1974 թթ.

1) 1-ա, 2-բ, 3-ե, 4-գ, 5-դ
2) 1-գ, 2-ե, 3-զ, 4-ա, 5-բ
3) 1-զ, 2-ա, 3-բ, 4-ե, 5-գ
4) 1-զ, 2-ե, 3-դ, 4-բ, 5-գ

Բ մակարդակ

51 **Նշված պնդումներից ո՞րն է սխալ.**

1) Աքեմենյան վերջին Դարեհ III արքան նախապես եղել է Հայաստանի սատրապը:
2) Եգիպտոսի Միջին թագավորությունն իր հզորության գագաթնակետին հասավ XI հարստության օրոք:
3) Կասիտական ցեղերի գերիշխանությունը Միջագետքում հաստատվել է ամորեական հարստության անկումից հետո:
4) Նոր Բաբելոնյան արքա Նաբոնիդն իր կենտրոնը դարձրեց Տեյման, որը գտնվում էր Արաբական թերակղզում:

52 **Նշված պնդումներից ո՞րն է ճիշտ.**

1) Խաչակրաց երրորդ արշավանքի ընթացքում Անգլիայի թագավոր Ռիչարդ I Առյուծասրտին հաջողվեց մահմեդականներից ազատել Երուսաղեմը:
2) Վերդենի 743 թ. դաշնագրով կայսերական տիտղոսն անցնելու էր Կարլոս Մեծի թոռ Լյուդովիկոս Գերմանացուն:
3) Պուատիեի մոտ 732 թ. արաբական առաջխաղացումը կասեցվեց մայորդոմ Պիպին Կարճահասակի կողմից:
4) Սրբազան հռոմեական կայսրության հիմնադիրն Օտտոն I-ն է:

53 **Նշված պնդումներից ո՞րն է սխալ.**

1) Հավաքական անվտանգության վերաբերյալ պայմանագրի կազմակերպությունը (ՀԱՊԿ) ստեղծվել է 2002 թ. մայիսի 14-ին:
2) Բելովեժսկի համաձայնագիրը ստորագրվել է 1991 թ. դեկտեմբերի 8-ին:
3) 1991 թ. նոյեմբերի 15-ին ԽՍՀՄ-ի Պետական խորհուրդը հաստատեց Ինքնիշխան Պետությունների Միության ստեղծման վերաբերյալ պայմանագրի նախագիծը:
4) Ռուսաստանի պետական սուվերենության մասին հռչակագիրը ընդունվել է 1990 թ. հունիսի 12-ին:

54 **Տերմինները համապատասխանեցնել իրենց բովանդակությանը.**

1. պոլիս	ա. Հին Աթենքում՝ տոհմային ավագանու ներկայացուցիչ:
2. էվպատրիդ	բ. Ավագների խորհուրդ Հին Սպարտայում:
3. գերուսիա	գ. Ատտիկայի վարչական շրջանների ներքին մասերի անվանում:
4. տրիտիա	դ. Ժողովրդական ժողով Հին Աթենքում:
	ե. Հինհունական քաղաք-պետություն:

1) 1-բ, 2-ե, 3-դ, 4-ա
2) 1-գ, 2-ա, 3-դ, 4-բ
3) 1-ա, 2-բ, 3-ե, 4-դ
4) 1-ե, 2-ա, 3-բ, 4-գ

55 **Տերմինները համապատասխանեցնել իրենց բովանդակությանը.**

1. գայիսոն
2. կատար
3. ուշր
4. գիլդիա

ա. Առևտրականների կազմակերպություն միջնադարյան Եվրոպայում:
բ. Մուսուլմանների կողմից վճարվող տասանորդ:
գ. Հերետիկոսական շարժման մասնակից միջնադարյան Ֆրանսիայում:
դ. Արքայական կալվածքների կառավարիչ Ֆրանկական թագավորությունում:
ե. Հողի նկատմամբ եպիսկոպոսի կամ վանահոր իրավունքը հաստատող խորհրդանշան:

1) 1-գ, 2-դ, 3-ա, 4-բ
2) 1-դ, 2-ե, 3-ա, 4-բ
3) 1-ե, 2-գ, 3-բ, 4-ա
4) 1-բ, 2-ա, 3-ե, 4-դ

56 **Տերմինները համապատասխանեցնել իրենց բովանդակությանը.**

1. պրոտեկտորատ
2. ռայխստագ
3. շովինիզմ
4. «նոր ազատություն»
5. նարոդնիկներ

ա. Խոշոր տերությունների կողմից հպատակ ազգերի ձուլմանը միտված հետադիմական քաղաքականություն:
բ. ԱՄՆ-ի նախագահ Թ. Ռուզվելտի բարեփոխումների ծրագիրը:
գ. Միապետականների դեմ ուղղված և բարեփոխումները պաշտպանող կառավարման հատուկ ձև Անգլիայում:
դ. Գյուղացիական հեղափոխության հետևորդներ Ռուսաստանում, որոնք կազմակերպել են «երթ դեպի ժողովուրդ»:
ե. ԱՄՆ-ի նախագահ Վ. Վիլսոնի բարեփոխումների ծրագիրը:
զ. Բարձրագույն օրենսդիր ատյան կայսերական Գերմանիայում

1) 1-գ, 2-դ, 3-ե, 4-բ, 5-ա
2) 1-զ, 2-գ, 3-դ, 4-ա, 5-բ
3) 1-գ, 2-զ, 3-ա, 4-ե, 5-դ
4) 1-դ, 2-գ, 3-զ, 4-ա, 5-ե

57 **Որո՞նք են Աշուր քաղաքի վերելքի հիմնական պատճառները.**

ա. Աշուրը գտնվում էր արևելքից արևմուտք և հյուսիսից հարավ տանող առևտրական ուղիների խաչմերուկում:
բ. Աշուրը ստեղծել էր մշտական արհեստավարժ բանակ:
գ. Աշուրն առևտրական գաղութներ էր ստեղծել հումքի աղբյուրներին առավել մոտ՝ հատկապես Փոքր Ասիայում:
դ. Աշուրի շրջակայքը հարուստ էր մետաղական հանքերով:
ե. Աշուրցի առևտրականներն արտահանում էին տեղի արհեստագործական արտադրանքը:

1) ա, գ, դ
2) ա, գ, ե
3) ա, բ, ե
4) բ, դ, ե

58 **Նշված փաստարկներից ընտրել երեքը, որոնք հանդիսանում են Եվրոպայում բացարձակ միապետության առաջացման հիմնական պատճառ.**

ա. Ազնվականությունը որպես ռազմաքաղաքական խավ կորցրեց իր նախկին դերը՝ կախման մեջ ընկնելով միապետից:
բ. Առաջացան և որպես ինքնավար միավորներ հանդես եկան միջնադարյան քաղաքները:
գ. Իսլամական աշխարհից Եվրոպային մշտապես վտանգ էր սպառնում:
դ. Եկեղեցու ենթարկումը պետությանը, Ռեֆորմացիան և աշխարհիկ մտավորական խավի առաջացումը միապետից կախման մեջ դրին հոգևորականությանը:
ե. Միապետի շուրջ համախմբվեցին առևտրականներն ու արդյունաբերողները, որոնք ամենից շատ էին զգում պետության հովանավորության կարիքը:
զ. Ստեղծվել էր անհրաժեշտություն՝ կանխարգելու պետության կառավարման կենտրոնացումը մի խումբ մարդկանց ձեռքում:

1) գ, ե, զ
2) բ, գ, զ
3) ա, գ, դ
4) ա, դ, ե

59 **Նշված փաստարկներից ընտրել երեքը, որոնք հանդիսանում են Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ԱՄՆ-ի բարձրացման հետևանք.**

ա. ԱՄՆ-ի կողմից սկիզբ դրված չեզոքության քաղաքականությունը:
բ. Ամերիկյան ռազմական հենակայանների թվի մեծացումը մինչև 500-ի:
գ. Ամերիկյան զինվորական ստորաբաժանումներ տեղակայումը Գերմանիայում, Իտալիայում, Ճապոնիայում և այլ երկրներում:
դ. «Վհուկների որսի» և այլախոհների հետապնդումների դադարեցումը:
ե. ԱՄՆ-ի կողմից «համաշխարհային պատասխանատվության» ստանձնումը:
զ. Սպառազինությունների մրցավազքի դադարեցումը:
է. ԽՍՀՄ-ի և ԱՄՆ-ի միջև բարեկամության և փոխադարձ օգնության պայմանագրի կնքումը:

1) բ, զ, ե
2) դ, ե, զ
3) ա, գ, զ
4) ա, դ, ե

60 **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Փարավոն Ամենհոտեպ IV-ի (Էխնաթոն) կրոնական բարեփոխումները
բ. Եգիպտոսի Հին թագավորության անկումը
գ. Միացյալ Եգիպտոսի ստեղծումը Մինայի կողմից
դ. Եգիպտոսի ենթարկվելը Քուշի գերիշխանությանը
ե. Փարավոն Ջոսերի կառավարումը

1) գ, ե, բ, ա, դ
2) ե, գ, բ, դ, ա
3) բ, ա, դ, ե, գ
4) դ, ա, գ, բ, ե

61 **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Ռուսիայի նվաճումը մոնղոլների կողմից
բ. Ոսկե Հորդայի տիրապետության տապալումը Ռուսական պետությունում
գ. Յարոսլավ Իմաստունի մահը
դ. Երկրային ժողովի կողմից Միխայիլ Ռոմանովի ցար ընտրվելը
ե. Իվան IV Ահեղի թագադրությունը

1) դ, բ, ա, ե, գ
2) բ, ա, գ, դ, ե
3) գ, ա, բ, ե, դ
4) ա, դ, ե, գ, բ

62 **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Սայքսի և Պիկոյի գաղտնի համաձայնագիրը
բ. Երկրորդ հանրապետության հռչակումը Ֆրանսիայում
գ. Վիեննայի վեհաժողովի ավարտը
դ. Ռուսաստանի Հայրենական պատերազմը
ե. Վուդրո Վիլսոնի նախագահ ընտրվելը
զ. Ճորտատիրության վերացումը Ռուսաստանում
է. Ճակատամարտ Մառն և Էնն գետերի շրջանում
ը. Հռոմը Իտալիայի մայրաքաղաք հռչակվելը
թ. ԱՄՆ-ի առաջին աշխարհամարտին մասնակցության սկիզբը
ժ. Համաձայնագիր Ավստրո-Հունգարիայի ստեղծման մասին

1) է, դ, ժ, բ, ա, զ, գ, թ, ը, ե
2) գ, դ, ա, ե, բ, է, զ, ը, թ, ժ
3) դ, գ, բ, զ, ժ, ը, ե, է, ա, թ
4) ը, ա, գ, զ, դ, ե, ժ, թ, բ, է

63 **Պատմական ո՞ր ժամանակաշրջանին էր հատուկ հետևյալ ասույթը. «Չկա ուրիշ իշխանություն, բացի Աստծո տվածից»:**

1) «Պերիկլեսյան ոսկեդարի» ժամանակաշրջանին
2) Հռոմեական հանրապետության ժամանակաշրջանին
3) Ռեֆորմացիայի ժամանակաշրջանին
4) Բարբարոսական թագավորության ժամանակաշրջանին

64 **Ո՞վ է հետևյալ խոսքերի հեղինակը. «Մենք չենք կարող թույլ տալ մեզ հենվելու ուժերի աննշան գերակշռության վրա՝ դրանով իսկ ստեղծելով ուժերը փորձարկելու գայթակղություն»:**

1) Ու. Չերչիլ
2) Ն. Սարկոզի
3) Է. Հոնեկեր
4) Ս. Բեռլուսկոնի

65 **Համապատասխանեցնել պետական գործիչներին նրանց կառավարման տարեթվերի հետ.**

1. Կյուրոս II
2. Դարեհ III
3. Քսերքսես I
4. Դարեհ I

ա. Ք. ա. 486-465 թթ.
բ. Ք. ա. 359-336 թթ.
գ. Ք. ա. 522-486 թթ.
դ. Ք. ա. 558-529 թթ.
ե. Ք. ա. 336-330 թթ.

1) 1-ա, 2-դ, 3-ե, 4-բ
2) 1-ա, 2-դ, 3-բ, 4-ե
3) 1-դ, 2-ե, 3-ա, 4-գ
4) 1-բ, 2-գ, 3-ե, 4-ա

66 **Կատարել համապատասխանեցում.**

#	Իրադարձությունը	#	Տարեթիվը	#	Վայրը
1.	Քրիստոնեական եկեղեցու պառակտումը	1.	843 թ.	1.	Վերդեն
2.	Բարդուղիմեոսյան գիշերը	2.	1054 թ.	2.	Կոստանդնուպոլիս
3.	Եպիսկոպոսների և վանահայրերի ընտրության կարգի սահմանման մասին համաձայնագիրը	3.	1122 թ.	3.	Փարիզ
4.	Լյուդովիկոս Բարեպաշտի որդիների միջև դաշնագրի կնքումը	4.	1572 թ.	4.	Վորմս

1

1	3	2
2	1	4
3	4	1
4	2	3

2

1	1	2
2	4	3
3	3	1
4	2	4

3

1	4	1
2	3	4
3	2	3
4	1	2

4

1	2	2
2	4	3
3	3	4
4	1	1

67 **Նշված փաստերից ընտրել երեքը, որոնք բնորոշ են Եգիպտոսի Նոր թագավորության դարաշրջանին.**

ա. Ստեղծվեց խոշոր բանակ, որի մեջ կարևոր տեղ ունեին մարտակառքերի ջոկատներն ու վարձկանները:
բ. Քուշի տիրակալներն իրենց գերիշխանությունը հաստատեցին Եգիպտոսում:
գ. Փորձ արվեց կրոնական լուրջ բարեփոխումների միջոցով սահմանափակել Ամոնի քրմության ազդեցությունը:
դ. Կնքվեց եգիպտա-խեթական պայմանագիր, որով կողմերը պարտավորվում էին վիճելի բոլոր հարցերը լուծել խաղաղ միջոցներով, իսկ օտար հարձակման դեպքում՝ օգնել միմյանց:
ե. Պարբերաբար կրկնվող գյուղացիական ապստամբությունների հետևանքով երկիրը մասնատվեց մի քանի տասնյակ նոմերի:

1) ա, բ, դ
2) ա, գ, դ
3) բ, դ, ե
4) գ, դ, ե

68 **Նշված փաստարկներից ընտրել չորսը, որոնք բնորոշ էին Իրանում տարածված բաբիականության շարժմանը.**

ա. Բոլոր մուսուլմանների հոգևոր առաջնորդ էր հռչակվում Իրանի շահնշահը:
բ. Իրանում պետք է ստեղծվեր Բաբիների սրբազան թագավորություն, ուր կհաստատվեին սոցիալական արդարություն և հավասարություն:
գ. Ղուրանը հնացել է և պետք է փոխարինվի նոր գրքով՝ «Բայանով» («Հայտնություն»):
դ. Հռչակվում էր «սրբազան» պատերազմ բոլոր այլադավանների դեմ, մերժվում էր այլախոհությունը:
ե. Պետք է հաստատվեր կնոջ և տղամարդու իրավահավասարություն:
զ. Խրախուսվում էին բազմակնությունը և հարեմների ընդլայնումը:
է. Մերժվում էր «անհավատների» դեմ մուսուլմանների սրբազան պատերազմը, խրախուսվում հանդուրժողականությունն այլախոհության նկատմամբ:

1) բ, զ, ե, է
2) ա, գ, դ, զ
3) բ, դ, ե, զ
4) բ, դ, զ, է

69 **Բերված փաստարկներից ընտրել չորսը, որոնք վերաբերում են Մուսսոլինիի ստեղծած կորպորատիվ համակարգին.**

ա. Տնտեսության հիմնական ճյուղերն ու սոցիալական ոլորտը հանդես էին գալիս որպես առանձին միավորներ՝ կորպորացիաների տեսքով:
բ. Ֆինանսական պաշարները պետք է կենտրոնանային պետության ձեռքում:
գ. Ստեղծվելու էր կարգապահ տնտեսություն և կայուն սոցիալական համակարգ:
դ. Բացառվում էր դասակարգային պայքարը:
ե. Վատիկանը՝ որպես Հռոմի պապի առանձին պետություն, վերացվեց:
զ. Իտալիան պետք է հասներ ինքնապահովման՝ արտադրելով այն ամենը, ինչ նախկինում ներմուծում էր:
է. Արգելվում էին ոգելից խմիչքների արտադրությունն ու ներմուծումը:

1) ա, դ, ե, է
2) ա, բ, դ, զ
3) ա, գ, դ, զ
4) բ, դ, զ, է

70 **Տերմինները համապատասխանեցնել իրենց բովանդակությանը.**

1. ագորա
2. թերմ
3. ակրոպոլիս
4. աքվեդուկ
5. բազիլիկ

ա. ջրանցույց
բ. հասարակական-առևտրական կենտրոն
գ. եռամաս երկայնավուն սրահ
դ. միջնաբերդ և սրբավայր
ե. հասարակական բաղնիք
զ. հաղթակամար

1) 1-ե, 2-բ, 3-դ, 4-ա, 5-գ
2) 1-բ, 2-ե, 3-դ, 4-ա, 5-գ
3) 1-ա, 2-դ, 3-ե, 4-գ, 5-զ
4) 1-զ, 2-ա, 3-դ, 4-ե, 5-բ

71 **Տերմինները համապատասխանեցնել իրենց բովանդակությանը.**

1. հուգենոտներ
2. լևելերներ
3. Ազգային կոնվենտ
4. արևմտականներ
5. Կառավարման միջոց
6. Գերմանական միություն

ա. Ֆրանսիական Սահմանադիր ժողով:
բ. Վիեննայի վեհաժողովի որոշմամբ ստեղծված պետական կազմավորում:
գ. Հավասարականներ, XVII դ.անգլիական սահմանադրության առաջադիմական նախագծի կողմնակիցներ:
դ. Կալվինական եկեղեցու հետևորդներ Ֆրանսիայում:
ե. Պետրոս Մեծի կողմից նախանշված Ռուսաստանի զարգացման ուղու կողմնակիցներ:
զ. Անգլիական սահմանադրությունը Օ. Կրոմվելի պրոտեկտորատի ժամանակ:
է. Անգլիայի համար նախանշված զարգացման ուղու կողմնակիցներ XIX դարում:

1) 1-դ, 2-գ, 3-ա, 4-ե, 5-զ, 6-բ
2) 1-ե, 2-է, 3-բ, 4-դ, 5-ա, 6-գ
3) 1-ե, 2-բ, 3-զ, 4-գ, 5-է, 6-դ
4) 1-դ, 2-գ, 3-ա, 4-է, 5-բ, 6-զ

72 **Նշված հասկացությունները համապատասխանեցնել իրենց բովանդակությանը.**

1. բացարձակ միապետություն
2. պահպանողականություն
3. սահմանադրական միապետություն
4. «նոր ազգայնականություն»
5. ավտորիտար կառավարում

ա. ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոնի բարեփոխումների ծրագիրը:
բ. XVII-XVIII դդ. հեղափոխության և լուսավորականության հակազդեցությամբ ձևավորված քաղաքական գաղափարախոսություն:
գ. Կառավարման ձև, երբ միապետի անձնական իշխանությունը ոչնչով չի սահմանափակվում:
դ. Կառավարման ձև, երբ հասարակությունը պետք է ենթարկվի պետության ղեկավարի կամքին:
ե. ԱՄՆ-ի նախագահ Թեոդոր Ռուզվելտի բարեփոխումների ծրագիրը:
զ. Կառավարման ձև, երբ սահմանափակվում են միապետի իշխանությունն ու իրավունքները:

1) 1-ե, 2-բ, 3-ա, 4-գ, 5-զ
2) 1-գ, 2-զ, 3-բ, 4-ե, 5-ա
3) 1-դ, 2-ա, 3-ե, 4-բ, 5-զ
4) 1-գ, 2-բ, 3-զ, 4-ե, 5-դ

73 **Բերված փաստարկներից ընտրել երեքը, որոնք հանդիսանում են Երեսնամյա պատերազմի հետևանք.**

ա. Խիստ աճեց Ֆրանսիայի քաղաքական հեղինակությունը:
բ. Միջազգային ճանաչում ստացան Լիվոնյան պետությունը և Լեհաստանը:
գ. Միջազգային ճանաչում ստացան Շվեյցարական Միությունն ու Նիդեռլանդները (Հոլանդիա):
դ. Ավարտվեց Գերմանիայի քաղաքական միավորումը:
ե. Ռուսաստանը վերջնականապես ամրապնդվեց Սև ծովի հյուսիսային ափերին:
զ. Օրինականացվեց Գերմանիայի քաղաքական և դավանաբանական մասնատվածությունը:

1) բ, դ, ե
2) բ, դ, ե
3) ա, դ, զ
4) ա, գ, զ

74 **Բերված փաստարկներից ընտրել չորսը, որոնք հանդիսանում են Վերսալյան պայմանագրի հետևանք.**

ա. Գերմանիան կորցրեց Էլզասն ու Լոթարինգիան:
բ. Սաարի ածխաավազանի շրջանը 10 տարով դրվեց միջազգային վերահսկողության տակ:
գ. Հռենոսի գոտին հայտարարվեց ապառազմականացված:
դ. Գերմանիան պարտավորվում էր փոխհատուցել հաղթող երկրների նյութական վնասները:
ե. Գերմանիան կորցրեց իր տարածքի 1/5 մասը:
զ. Դանցիգը(Գդանսկ) ստացավ ազատ քաղաքի կարգավիճակ:
է. Գերմանիայի բանակը չպետք է գերազանցեր 150 հազարը:

1) ա, գ, դ, զ
2) ա, բ, զ, է
3) բ, դ, ե, զ
4) գ, դ, զ, է

75 **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Նիկիասի հաշտությունը Սպարտայի և Աթենքի միջև
բ. Բարդիայի ապստամբությունը
գ. Սալամինի ճակատամարտը
դ. Իսոսի ճակատամարտը մակեդոնական և պարսկական բանակների միջև
ե. Աթենական նավատորմի սիցիլիական արշավանքը
զ. Քսերքսես I-ի դավադիր սպանությունը
է. Կյուրոս II-ի զոհվելը մասագետների դեմ ճակատամարտում
ը. Կորնթոսի համահունական վեհաժողովը
թ. Պելոպոնեսյան պատերազմների ավարտը
ժ. Արբելայի ճակատամարտը մակեդոնական և պարսկական բանակների միջև

1) ե, բ, ժ, ա, գ, է, զ, դ, թ, ը
2) բ, զ, է, թ, գ, ե, ժ,ա, դ, ը
3) է, բ, գ, զ, ա, ե, թ, ը, դ, ժ
4) զ, ա, ե, ը, դ, գ, ժ, բ, է, թ

76 **Ճակատամարտերը դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Կատալաունյան դաշտի ճակատամարտը
բ. Նևայի ճակատամարտը
գ. Կոսովոյի ճակատամարտը
դ. Ադրիանապոլսի ճակատամարտը
ե. Մանազկերտի ճակատամարտը
զ. Պուատիե ճակատամարտը
է. Սուասոնի ճակատամարտը
ը. Անկարայի ճակատամարտը
թ. Չուդ լճի ճակատամարտը
ժ. Կուլիկովոյի ճակատամարտը

1) զ, դ, ա, բ, է, թ, ժ, ե, ը, գ
2) դ, ա, է, զ, ե, բ, թ, ժ, գ, ը
3) գ, բ, ա, ժ, ե, դ, թ, զ, է, ը
4) ա, է, բ, դ, թ, զ, ե, գ, ը, ժ

77 **Կատարել համապատասխանեցում.**

#	Իրադարձությունը	#	Գործիչը	#	Տարեթիվը
1.	Պայմանագրի կնքումը Հռոմի և Սելևկյանների միջև	1.	Դիոկղետիանոս	1.	Ք. հ. 476 թ.
2.	Պիլոս քաղաքի գրավումն աթենացիների կողմից	2.	Ալեքսանդր Մակեդոնացի	2.	Ք. ա. 188 թ.
3.	Դոմինատի սկիզբը	3.	Դեմոսթենես	3.	Ք.ա. 425 թ.
4.	Գրանիկոսի ճակատամարտը	4.	Օդոակր	4.	Ք.հ. 284 թ.
5.	Վերջին հռոմեական կայսեր գահընկեցությունը	5.	Անտիոքոս III	5.	Ք.ա. 334 թ.

1

1	3	4
2	1	5
3	2	3
4	5	1
5	4	2

2

1	5	2
2	3	3
3	1	4
4	2	5
5	4	1

3

1	2	5
2	1	3
3	5	4
4	3	1
5	4	2

4

1	4	3
2	2	4
3	3	5
4	1	2
5	5	1

78 **Կատարել համապատասխանեցում.**

#	Իրադարձությունը	#	Տարեթիվը	#	Գործիչը	#	Վայրը
1.	Հուգենոտների դավանանքին ազատություն շնորհելը	1.	1265 թ.	1.	Իվան IV	1.	Վիտենբերգ
2.	Երկրային ժողովի հրավիրումը	2.	1517 թ.	2.	Մարտին Լյութեր	2.	Լոնդոն
3.	Խորհրդարանի հրավիրումը	3.	1598 թ.	3.	Սիմոն դը Մոնֆոր	3.	Մոսկվա
4.	95 դրույթների հրապարակումը	4.	1549 թ.	4.	Հենրիխ Բուրբոն	4.	Նանտ

1

1	4	2	3
2	1	4	2
3	2	3	1
4	3	1	4

2

1	2	3	2
2	3	4	1
3	1	2	4
4	4	1	3

3

1	2	1	2
2	4	3	1
3	1	4	3
4	3	2	4

4

1	3	4	4
2	4	1	3
3	1	3	2
4	2	2	1

79 **Կատարել համապատասխանեցում.**

#	Իրադարձությունը	#	Տարեթիվը	#	Գործիչը
1.	Թեհրանը Իրանի մայրաքաղաք հռչակելը	1.	1653 թ.	1.	Լուի Նապոլեոն
2.	Սահմանադրության ընդունումն Անգլիայում անկախականների կողմից	2.	1775 թ.	2.	Աղա Մոհամմադ խան
3.	Ազատ ձեռներեցության մասին օրենքի ընդունումը Ռուսաստանում	3.	1852 թ.	3.	Օ. Կրոմվել
4.	Կայսրության վերականգնումը Ֆրանսիայում	4.	1795 թ.	4.	Եկատերինա II

1

1	3	2
2	2	1
3	4	3
4	1	4

2

1	2	4
2	4	1
3	1	3
4	3	2

3

1	4	2
2	1	3
3	2	4
4	3	1

4

1	2	1
2	3	4
3	1	3
4	4	2

80 **Կատարել համապատասխանեցում.**

#	Իրադարձությունը	#	Տարեթիվը	#	Վայրը
1.	Սուդեթական մարզը Գերմանիային հանձնելու համաձայնագիրը	1.	1941 թ.	1.	Նորմանդիա
2.	Երկրորդ ճակատի բացումը Եվրոպայում	2.	1942 թ.	2.	Պիրլ Հարբոր
3.	Ճապոնական օդուժի հարձակումն ամերիկյան ռազմածովային հե-նակայանի վրա	3.	1944 թ.	3.	Վաշինգտոն
4.	Միավորված ազգերի հռչակագրի ստորագրումը	4.	1938 թ.	4.	Լոնդոն
		5.	1939 թ.	5.	Մյունխեն

1

1	5	4
2	3	2
3	4	1
4	2	3

2

1	2	4
2	1	3
3	4	1
4	2	5

3

1	3	2
2	4	3
3	1	4
4	2	1

4

1	4	5
2	3	1
3	1	2
4	2	3